



# Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Շնորհավորում եմ



Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից եւ անձամբ «Վերջին գանգ»-ի առթիվ շնորհավորում եմ շրջանավարտներին, մասկավարժներին, ծնողներին եւ մաղթում, որ օրվա տոնականությունը պայծառ հիշողություն դառնա բոլորի կյանքում:

Կրդեն կայացած ավանդույթի համաձայն՝ այս օրերին ոստիկանության ծառայողները հանդիպումներ են ունեցել մանկավարժների, ծնողների, աշակերտների հետ, կրկին հիշեցրել տոնին հասարակական կարգը, երթեւեկության անվտանգությունը, համակեցության կանոնները պահպանելու անհրաժեշտությունը մասին:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ եւս մեկ անգամ բարձր իրավագիտակցության կոչել մեր համաբաղաբաշխներին:

Հորդորում եմ ծնողներին՝ տրանսպորտային միջոցներ չտրամադրել անչափահասներին, հարկ եղած դեպքում դուք վարեք մեքենան, զանգվածային միջոցառումների ժամանակ համագործակցեք ուսուցիչների, ոստիկանության ծառայողների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:

Շրջանավարտներին կոչ եմ անում հարգալից լինել միմյանց ու հակրության հանդեպ, տոնական հրավառություն կազմակերպել միայն օրենքով սահմանված կարգով, կատարել ոստիկանության ծառայողների օրինական պահանջները:

Տոնական օրվա առավոտից ոստիկանության ստորաբաժանումները ուժեղացված ծառայություն են իրականացնելու զանգվածային միջոցառումների վայրերում, ողջ ծավալով ապահովելու են հասարակական կարգը, պահպանելու են միջոցառումների մասնակիցների եւ բաղաբաշխների անվտանգությունն ու իրավունքները: Դրսերտելով օրինապահ խստությունն ու պահանջկոտությունն՝ հասարակական կարգի խախտումները կանխվելու են տեղում, օրինազանցների ավտոմեքենաները տեղափոխվելու են հատուկ պահպանվող տարածք, իրավախախտները ենթարկվելու են պատասխանատվության:

Այնպես լինելով մեր բաղաբաշխների աջակցությունը՝ կրկին կոչ եմ անում ոստիկանության հետ միասին անել առավելագույնը՝ մեր երեխաների տոնը որեւէ անցանկալի միջադեպով չմթախելու համար:

Կրկին շնորհավորում եմ «Վերջին գանգ» տոնի առթիվ եւ բարի ճանապարհ, սիրելի շրջանավարտներ:

Վալերիյ ՕՍԻՊՅԱՆ  
ՀՀ ոստիկանության պետ

## Ուժեղացված ծառայություն

Մայիսի 21-ին ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության բաժնի, ուղեկցող սպայական վաշտի եւ Երեւանը սպասարկող ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական զոււարտակի ծառայողները ուժեղացված ծառայություն իրականացրին մայրաքաղաքում:



Ուժեղացված ծառայության ընթացքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմվեց քառասունյոթ վարորդի նկատմամբ, տասնութ տրանսպորտային միջոց տեղափոխվեց ճանապարհային ոստիկանության պահպանվող հատուկ տարածք:

Չորս վարորդ մեքենան վարում էր անսթափ վիճակում, տասնհինգը՝ ժամկետանց ԱՊ-ՊԱ պայմանագրով, իսկ երեք տրանսպորտային միջոց շահագործվում էր առանց հաշվառման համարանիշերի:

Ոստիկանության կենտրոնում էին ճանապարհային երթեւեկության անվտանգության կանոնները կոպտորեն խախտող եւ երթեւեկության մյուս մասնակիցների հանդեպ միտումնավոր անհարգալից վերաբերմունք ցուցաբերող վարորդները:

Ուժեղացված ծառայության ընթացքում հայտնաբերվեց նաեւ այլ գերատեսչությունների կողմից հետախուզվող երկու տրանսպորտային միջոց:

ԷԳ 3

## Հետախուզվողների չապրած տարիները

Հանցագործության բացահայտումը գործի կեսն է: Գործն ամբողջանում է, երբ բոլոր մեղավորները կանգնում են դատարանի առջև ու սրանում պարիժ: Նեց պարիժի անխուսափելիության գաղափարն են կյանքի կոչում ոստիկանության աշխատակիցները՝ հետախուզվողին հայտնաբերելու գործը սրանձնելով:



Դատարանի վճռով ազատազրկված անձը մեկուսացվում է հասարակությունից, գրկվում որոշ իրավունքներից, այդ թվում՝ ընտրելու եւ ընտրվելու, ազատ փոխադրվելու եւ այլն: Պարտաժամակերպ մարտից հետո, սակայն, վերականգնվում են նրա բոլոր իրավունքները:

Պարկերը առավել մռայլ է հետախուզման մեջ գրվողի դեպքում. մարդն ինքն է իրեն գրկում բոլոր իրավունքներից, ապրում կաշկանդված եւ նույնիսկ գրկում իրեն հույսից, որ պարիժը կրելուց հետո՝ կվերազարթի իր իրավունքները: Ինքնամեկուսացմանը հետեւում են ֆոբիաները՝ վախերը. վախ ամեն մի համագեցարավորից, վախ ամեն մի մեքենայի արգելակումից, վախ հեռախոսի ու դռան զանգերից, վախ սեփական շողքից... Ավելին, եթե դատարարայալը երբեմն իրավունք է սրանում քեռակցել մարտիկների հետ, հետախուզման մեջ գրվողն իրեն այդ իրավունքից էլ է գրկում: Ի վերջո, պարկերը լրիվ է մռայլվում, երբ գալիս է հարուցման ժամը: Ներքո գրվում է ոչ միայն հանցանքի, այլեւ պարիժից խուսափելու դատարկ օրերի, ինքնամեկուսացման ու վախերի համար:

ԷԳ 2

## 50 միլիոն դրամի յուրացում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները, Գեղարքունիքի մարզային վարչության եւ Մարտունու բաժնի քրեական հետախույզների հետ, առանձնապես խոշոր չափերի յուրացման կամ վատման հանցագործության դեպք են բացահայտել:



Օպերատիվ-հետախույզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի նախկին ղեկավարը, չարաշահելով պաշտոնական դիրքը, կազմակերպել է համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող տարածքներից մեկի 25 կմ երկարությամբ եւ շուրջ 50 միլիոն դրամ արժողությամբ խմելու ջրի խողովակաշարի ապամոնտաժումը եւ յուրացրել մետաղա խողովակները: Նա խողովակների մի մասն իրացրել է եղբոր ընկերությանը, որն էլ հետագայում դրանք օգտագործել է Վերին Գետաշեն համայնքի լուսավորության ցանցի կառուցման համար:

Հարուցվել է քրեական գործ:

## Ապօրինություններ բժշկական բոլեջում

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Վանաձորի պետական բժշկական բոլեջի տնօրենը մի շարք չարաշահումներ է կատարել:



Նյութերի նախապատրաստման ընթացքում ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Լոռու մարզային վարչության եւ Տարոնի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումներով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Վանաձորի պետական բժշկական բոլեջի տնօրենը տարբեր պաշտոնների է ձեւակերպել դատերը եւ այլ անձանց, որոնք իրականում աշխատանքի չեն ներկայացել, եւ տնօրենը վատման եղանակով հափշտակել է ընդհանուր 11 միլիոն 880 հազար դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

## « ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցման 2019/2020 ուստարվա ընդունելություն

Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության բակալավրի աստիճան եւ տրվում պետական նմուշի դիպլոմ: Ուսման տեւողությունը 4 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

**Ավագակությունը բացահայտվեց**  
  
Ուղեորը դանակով սպառնալով՝ հափշտակել էր վարորդի փողերը, հեռախոսը եւ ժամացույցը:  
ԷԳ 2

**Ապատեղիության բացառում**  
  
Ականատեսն ինչոր բան էր կասկածել, բայց ձայն չէր հանել, ոչ էլ ահազանգել էր ոստիկանություն:  
ԷԳ 6

**Մի՛ վազանցիր, եթե վատահ չես**  
  
Մեքենայի ընթացքը դանդաղեցնելու փոխարեն վազանց կատարեց, ու բախումն անխուսափելի էր...  
ԷԳ 7











Օպերատիվ

2010 թ. հուլիսի կատարված ավազակային հարձակումը չբացահայտվեց: Կասկածյալներից մեկը ոստիկանների տեսողաշողում հայտնվեց երկու տարի անց: Նայտաբերվեց, բայց «տղամարդավարի» լռեց հանցակցի մասին, եւ նա քրեական գործով անցավ որպես անձը չպարզված:

Ոստիկանության Քննաքնն-Ձեռնարկի բնական բաժնում հարուցված քրեական գործն ուղարկվեց դատարան, վարդան Ղուկասյանը քրեական պատասխանատվության ենթարկվեց: Մեղադրանքը քրեական օրենսգրքի 175 հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով էր. պատիժը՝ վեց տարի ժամկետով ազատազրկում:

Իրացնելով օպերատիվ տվյալները՝ քրեական հետախույզները պարզեցին նաեւ հանցակցի ինքնությունը՝ մարաթոնի բնակիչ Սմբատ Մանուկյան: Նրա նկատմամբ հայտարարվեց միջազգային հետախույզում: Նայտաբերվեց ութ տարի անց:

2010-ի սեպտեմբերի կեսերն էր, կեսգիշերն անց: Գիմակավորված ու դանակով զինված ավազակները, տեխնիկական միջոցներով բացելով մուտքի դուռը, հայտնվեցին Դավիթ Անհաղթի փողոցի շինանյութերի խանութում: Պահակը հեռուստացույց էր դիտում, երբ դռանը հարվածեցին: Ելավ պարզելու՝ ովքեր են, երբ անսպասելի ներս խուժած դիմակավոր երիտասարդները պահանջեցին՝ «Նստի՛ր տեղդ, թե չէ՛ կսպանենք...» ու սկսեցին ինչ-որ բան փնտրել խանութում: Վարդան Ղուկասյանը պահակի հիշողության մեջ առանձնացավ ռուսախոսությամբ: Հանցագործները արագ գտան տանելիքը՝ խանութի եւ տարադրամի փոխանակման կետի չիրկիզվող պահարանները: Պահարանները խցկեցին մեքենայի մեջ ու հեռացան «Լամբարդ» կամրջի ուղղությամբ: Պահակը հասցրեց դա նկատել:

Պահարաններից մեկի մեջ, որ խանութին էր, մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար դրամ կար: Տարադրամի փոխանակման կետի պահարանում հարյուր հիսուն հազար դրամ էր:

Մինչ հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ օպերատիվ-հետախույզական միջոցառումներ էին ձեռնարկվում, հանցագործներից մեկը հեռացավ երկրից:

Վարդան Ղուկասյանը

# Անուստեղծությունը բացառում է



երկու տարի անց հայտնաբերվեց: Սմբատ Մանուկյանը ընտանիքի հետ տեղափոխվեց Ռուսաստան: 2019-ի մարտին կնոջ ու երեխայի հետ վերադարձավ Երեւան: Օպերատիվ տեսողաշողում էր. հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանություն:

Պատասխանատվությունից խուսափելու նպատակով մի շարք ալիքներ ենթակայացրեց: Օրինակ՝ իբր այդ օրը, երեկոյան ժամը 7-ից մինչեւ գիշերվա ժամը 3-ը, եղել էր ռեստորանում, մշել էին զարմուհու ծննդյան օրը, հետո կնոջ ու երեխայի հետ գնացել էր տուն ու մինչեւ առավոտյան ժամը 11-ը քնել: Մինչդեռ զարմուհու ծննդյան օրը երկու օր առաջ էր, ու հարազատներն այդ օրն էին մշել:

Հաջորդ ալիքին վերաբերում էր դեպքի վայրում հայտնաբերված մատնահետքերին. օրեր առաջ իբր եղել էր այդ խանութում, որովհետեւ բնակարանը նորոգելու մտադրություն ուներ: Այնինչ պարզվեց, որ բնակարանը ոչ թե նորոգելու, այլ վաճառելու մտադրություն ուներին:

Սմբատ Մանուկյանի ալիքները շատ էին, եւ բոլորն էլ անմեղության պատրանք ստեղծելու նպատակով: Մինչդեռ ավազակային հարձակմանը մասնակից լինելը հիմնավորվել է նաեւ մի շարք վկայություններով: Ներկայացնենք երկուսը:

Շինանյութերի խանութը բնակելի շենքի առաջին հարկում է, ու բնակիչներից մեկը հանցագործության ակամա ակամատեսն էր եղել: Երիտասարդ կինը լուսադեմին արթնացել էր իր երեխայի լացի ձայնից. դրսից լսել էր գետնին ինչ-որ բան քարշ տալու ձայն: Պատուհանից տեսել էր խանութի մուտքի մոտ կանգնած «Մերսեդես»-ը, իսկ խանութից երկու դիմակավորված մեքենաները քարշ տալով՝ չհրկիզվող պահարան էին հանում: Պահարանը մեքենայում տեղավորելուց հետո կրկին մտել էին խանութ եւ վերադարձել մեկ այլ պահարանով: Կինն ինչ-որ բան էր կասկածել, բայց ձայն չէր հանել, ոչ էլ ահագանգել էր ոստիկանություն:

Հաջորդ վկան Սմբատ Մանուկյանի մտերմուհին է: Նախաքննական մարմնին տված ցուցմունքում նա մշում է, որ Սմբատն ու Վարդանը իրար հետ երբեմն խոսել են ինչ-որ հորինված, անհասկանալի լեզվով: Նրանց այդ տարօրինակ խոսակցություններից ինքը գլխի է ընկել, որ ինչ-որ հանցավոր բանի մասին են պայմանավորվում: Ըստ վկայի, ընկերները բնակարան էին վարձակալել, որտեղ մարմնավաճառուհիներ էին տանում, զինարբուքներ կազմակերպում:

Վարձակալած բնակարանը քրեական գործում «հանդիպում է» նաեւ մեկ այլ վկայի միջոցով: Շենքի բնակիչներից մեկն այդ գիշեր արթնացել էր շքամուտքից լսվող երկաթյա ծանր առարկաների հարվածի ձայնից: Պատուհանից նայելով՝ տեսել էր, որ հարեւանի կենվորները քարշ տալով՝ երկաթյա արկղեր են իջեցնում, որոնք հետո տեղավորել էին «Մերսեդես»-ի մեջ ու հեռացել: Բնութայմար պարզվել էր, որ չիրկիզվող պահարանները տարել էին վարձակալած բնակարան, ջարդել է «մաքրագործություն» հետո չարտել էին...

Քրեական գործի՝ Սմբատ Մանուկյանի մասով կասեցված վարույթը վերսկսվել է:

## Հասնիկ ՊՊՈՒՍՅԱՆ

### Գողություններ ու գողության փորձ



արհեստագործական գործիքներ:

Կատարվածի վերաբերյալ օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Նոր Նորքի բաժնում ահազանգ ստացվեց:

Չետաքննություն իրականացնող մարմինը գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկեց օպերատիվ-հետախույզական միջոցառումներ: Դեպքի վայրում ձեռք բերված տվյալների եւ ստացված տեղեկությունների համադրությամբ պարզվեց, որ բնակարանային

գողությունը հնարավոր է կատարած լինեն Նոր Նորքի երկրորդ զանգվածի բնակիչ Արթուր Եղաբեկն ու նրա երկու անչափահաս ընկերները, որոնք մայիսի 6-ին բերման ենթարկվեցին ոստիկանության Նոր Նորքի բաժնի:

Չետաքնն միջոցառումներով պարզվել է, որ Նշվածից գատ նրանք Նույն օրը Այգեգործների փողոցի մի տնից երեք բնակարան հեռախոս ու խմիչք են գողացել: Ժամերի տարբերությամբ՝ Գյուլբջյանի փողոցի մեկ այլ տնից փորձել էին գողություն անել, սակայն գործն ավարտին հասցնել չէր հաջողվել:

Նարուցվել է քրեական գործ: **Գոռ ՎԱՆՅԱՆ**

### Գիշերային կողոպուտ

2017 թվականի դեկտեմբերի լույս 4-ի գիշերն էր: 21-ամյա Հրայր Գ.-ն ընկերոջ՝ Մխիթարի հետ Նորագավթի սուպերմարկետի մոտ հանդիպել է Սյունիքի մարզի բնակիչ Կորյուն Շ.-ին եւ տեղեկացել, որ նա ցանկանում է մեկնել Կապան: Կորյունը վերադառնում էր Ռուսաստանից: Նրա մոտ տեսնելով պայուսակ ու ճամպրուկ՝ Հրայրն ու Մխիթարը համաձայնության են եկել Կորյունի գույքը հափշտակելու վերաբերյալ: Հրայրն առաջարկել է Կորյունին իր «ԲՄՎ»-ով տանել մինչեւ Արտաշատ: Կորյունը համաձայնել է. գիշերով ճանապարհի գոնե որոշ մասն անցնելն էլ գործի կետը կարող էր լինել: Երեւան-Երասխ ավտոճանապարհին՝ Հրայրն կանգնեցրել է մեքենան: Մխիթարն իջել է մեքենայից, բացել հետեւի դուռն ու Կորյունի հագուստից թաշեղով դուրս է հանել մեքենայից եւ պահանջել հեռանալ: Կորյունը փորձել է մեքենայից դուրս բերել պայուսակն ու ճամպրուկը, բայց Մխիթարը չի թողել, փակել է դուռը, նստել է Հրայրայի կողքին, ու մեքենան շարժվել է:



տակ: Նրան մեղադրանք է առաջարկվել ավազակային հարձակում կատարելու համար:

Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում Հրայր Գ.-ն ավազակային հարձակման համար իրեն մեղավոր չի ճանաչել: Նա հայտնել է, թե ինքն ու Մխիթարը պայմանավորվել էին կողոպուտել հարձակում կատարելու: Ինքը տուժողին չի խփել, իր մոտ զսպանակած մահակ չի եղել: Թե ինչպես է մահակը հայտնաբերվել իր մեքենայի մեջ՝ չգիտի:

Դատական քննության ընթացքում չի հաջողվել տուժողին հարցաքննել. նա բացակայում էր Հայաստանից: Դատարանը անթույլատրելի ապացույց ունեցող տուժողի լրացուցիչ ցուցմունքը. միայն այդ ցուցմունքի մեջ էր նա հիշատակել զսպանակած մահակով Հրայրայի կողմից իրեն հարվածներ հասցնելու վերաբերյալ:

Դատարանն արձանագրել է, որ տեղի է ունեցել «հանցակցի սահմանազանցում», քանի որ Հրայրն ու Մխիթարը համաձայնության էին եկել տուժողին կողոպուտելու վերաբերյալ, բայց նախնական համաձայնությունը խախտվել է հանգուցյալ Մխիթարի կողմից:

Դատարանը վերադրակել է Հրայր Գ.-ին առաջարկված մեղադրանքը, նրան մեղավոր է ճանաչել կողոպուտ կատարելու համար եւ դատապարտել 3 տարի 6 ամիս ազատազրկման:

Հրայր Գ.-ի նկատմամբ կիրառվել է համաներման ակտ, նա ազատվել է պատժի կրումից: **Գոհար ԲԱՆԱԾՅԱՆ**

### Չենք-գիւնամբերքի հայտնաբերում



Գեղանիստ գյուղի տներից մեկը՝ հայտնաբերելով մեծ քանակությամբ ապօրինի պահվող զենք-զինամթերք: «Կալաշնիկով» ինքնաձիգը, մեկփողանի հրացանները, նռնակները, 800 գրամ պայթուցիկ նյութերը, տարբեր տրամաչափի փամփուշտները, լիցքավորված պահուսակները եւ այլ ռազմամթերքն առգրավվեց եւ ուղարկվեց դատաձգաբանական փորձաքննության: Տանտերը՝ 55-ամյա Գեւորգ Բագրատունին, բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժնի:

Արաբկիրի ոստիկանները, համագործակցելով տարածքային այլ ստորաբաժանումների գործընկերների հետ, հետախույզական միջոցառումներ են ձեռնարկում զենք-զինամթերքի ձեռքբերման աղբյուրը պարզելու ուղղությամբ:

Քննությունը շարունակվում է: **Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:





Ամանոր	Ֆրանս. կին գրող Պահստյուս-ված միս	Կտորեղեն Նահանգ, ՅԱՀ	Հողային մակերես	Տարվա եղանակ թռչուններ	Ֆլամանդ. նկարիչ	Քուլդար թագավոր	Ծանուցում	Պախար, կխտար
Հայկ. տոնական թխվածք	Մեքենայի մաս	Հուն. փիլիսոփ. բառերը Ձեռնով ...	Մարզիկ	Վայրի ցեղի ծի կոսքի մաս	Կորբա	Ամուրի վտակ	Շահ, եկամուտ	
... հույս, սեր	Հրդեհ, Կեսր Ինդիա Հակառակորդ	Սերտեր Շախմ. չեմպիոնուհի	Սերտեր Շախմ. չեմպիոնուհի	Ինքնաթիռ	Վիլնյուցու դրամ	Ազգություն, Ռուսաստան	Ազգություն, Ռուսաստան	Ֆրանս. երգահան Ընկույզ, նուշ
Հոտավետ նյութ ... ու պատարագ	Կրոն. հաստատու. ղեկավար	Հին Հռոմի լեզու	Քաղաք, եգիպտոս Ալբանիա	«Առանց ընտանիքի»	Չուկ Շուտով գինի կղառնա	Մարմնի մաս	«...ի բերդը»	
Պլիսեցկայա Արվեստի ուղղություն	Չիրով անուշեղեն	Ֆիդայի	Չեխ կին հայագետ Կենաց	«Պատերազմ եւ խաղաղություն» հերոս	Իսակով, Ուշակով	Շին. եւ գյուղ. գործիք	Ամերիկ. ֆիզիկոս Փայլուններ	Սլավոն
Գիբորի թույրը	Հացկոտեմ ... վուզի (բլուզ)	Չիանոց	Ստեպան ... Արագած	Սարդի տեսակ ... Վինչի	Պեյ Մոնակո, Լանցա	Գետ, Հեղկաստան	Ճարտարապետական տարր	
Ֆրանսիացի փիլիսոփա եւ բանաստ.	Սետաղ Գույն	Իտալական ֆուտբ. ակումբ	Ստեպան ... Արագած	Սարդի տեսակ ... Վինչի	Պեյ Մոնակո, Լանցա	Գետ, Հեղկաստան	Ճարտարապետական տարր	
... տարի	Սետաղ Գույն	Իտալական ֆուտբ. ակումբ	Ստեպան ... Արագած	Սարդի տեսակ ... Վինչի	Պեյ Մոնակո, Լանցա	Գետ, Հեղկաստան	Ճարտարապետական տարր	



### Ուշադրություն

#### Հարգելի քաղաքացիներ

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանները:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Սինջեւ 120թ/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 թ/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Սանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Երեւոնու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

**Կ**արծ - Ձգացմունքային դաշտը կայուն է: Բարձր տրամադրություն կպահպանեք, շրջապատի մարդկանց թույլ չեք տա ծանծաղանալ:

**Ա**ղեղնավոր - Կարծր գործեր ձեռնարկելը բարեհաջող կլինի: Անհրաժեշտ է մարտական տրամադրվել եւ առաջ շարժվել:

**Ա**յծեղջյուր - Կարող է փորձությունների ենթարկվել: Գայթակություններին դիմարկելը հեշտ չի լինի:

**Ջ**րիտ - Սեփական համառության շնորհիվ հնարավորություն կունենաք մեծ հաջողությունների հասնել:

**Խ**ուկ - Գործերը ավարտին կհասցնեք, գլուխ կհանեք բարդ խնդիրներից: Գործընկերները սիրով կօգնեն ձեզ:

### Մայրդարձուշակ

24.05 - 31.05

Խորհուրդ չի տրվում ուղեորությունների մեկնել, կարող եք ապագա ծանփորդության շուրջ ծրագրեր կազմել:

**Տ**ուր - Ստիպված կլինեք շատ աշխատել: Շատերը կարող են նույնիսկ ուժասպառ լինել:

**Ի**երկվորյակ - Հաջող գուգահիպությունները, հաճելի հանդիպումներն ու հետաքրքիր ծանոթությունները կուրախացնեն ձեզ:

**Տ**եցեգետին - Դժվարությունները կավարտվեն: Պահանջվում է զինվել համբերությամբ եւ մի փոքր էլ դիմանալ:

**Ա**ռյուծ - Դրամական միջոցներ տնօրինելը ձեզ մոտ չի ստացվի:

### Փորձեք լուծել

**Խնդիր N1**

Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. f2-g3 h2:b4 2. a1:g7x

Խնդիր N2 1. d2-c3 b4:d2 2. c7-g3 h4:f2 3. g1:a3x

**Խնդիր N2**

Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Պատրաստեց Նշան ԱՆԱՎԵՐԳՅԱՆԸ

Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

### Նախորդ համարի սկզբնական պատասխանները

Գ	Ա	Ս	Լ	Կ	Ա	Բ	Կ	Ք	Ո
Տ	Վ	Գ	Չ	Ա	Տ	Լ	Ո	Գ	Ս
Բ	Ա	Ս	Ո	Տ	Լ	Ո	Գ	Ս	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Ա	Գ	Ո	Տ	Լ	Ո	Տ	Լ	Ո	Տ
Ե	Ի	Կ	Ո	Տ	Լ	Ո	Տ	Լ	Ո
Գ	Ր	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ	Ս	Լ
Ա	Լ	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ	Ս	Լ
Ս	Ի	Ս	Ո	Տ	Լ	Ո	Տ	Լ	Ո
Ի	Ի	Ս	Ո	Տ	Լ	Ո	Տ	Լ	Ո
Ո	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ
Ո	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ
Ր	Ս	Ո	Տ	Լ	Ո	Տ	Լ	Ո	Տ
Ս	Տ	Լ	Ո	Տ	Լ	Ո	Տ	Լ	Ո
Ա	Լ	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ	Ս	Լ
Լ	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ
Ա	Լ	Ս	Լ	Կ	Ս	Լ	Կ	Ս	Լ

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան: Գրանցման վկայական 27312002739: Տրվել է 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 23.05.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950: Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հեռակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը՝ «02»-ին պարտադիր է: Հպատկիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: